

այս մարդս անոր ըսածներուն, և խոս-
տացաւ որ նորէն զինքը տիրո՞ջ քով
դարձնէ, յուսացնելով անկէ եղբը ա-
ւելի լաւ կինակ մը ունենայու: Խեղճ
երիտասարդը իր բարերարին հետ հա-
սաւ Հալին քով, որ երկայն ատեն Պրո-
վեր բոլոր քագքին մէջ փնտուելէն և
դանելէն յուսահատ, և թէ ըլլայ որ
կորսրնցնէ այսպիսի շահաւոր աշկերտ
մը՝ մեծ տհաճութեան մէջ էր: Պրովե-
րի առաջնորդը առանձին տհաճական
կերպեր ցուցուց Հալին վարուելու կեր-
պին վրայ: Երկրորդ օրը տէրը շատ ա-
նուշութեամբ սկսաւ վարուել իր աշա-
կերտին հետ. նոր զգեստներ հազցը-
նել տուաւ անոր, որով երիտասարդ
պատկերահանը երջանիկ վիճակի մը
վայելքը սկսաւ զգալ և անով աւելի ջան-
քով սկսաւ աշխատիլ. միշտ իր տիրոջ
շահը կը փնտուէր, որ սուղ սուղ կը ծա-
խէր Պրովերին այն նկարները որոնք ի-
րեն ոչ ինչ ծախքի մը եղած էին: Հե-
ղինակը միայն կ'անդիտանար իր հան-
ճարը և գեղեցիկ ձիքերը: Պրովերի
միտքը երբոր աղէկ մը բացուեցաւ,
ճար մը գտնելով փախաւ շիտակ Ամրս-
դերտամ: Հոն բաղը զինքը վան-Սօօ-
մեր անունով հարուստ մարդու մը քո-
վը ձգեց: Այս մարդը իր երիտասար-
դութեանը ժամանակ քիչ մը նկարել
սորված էր և նմանապէս իր տղաքն
ալ չափաւորապէս գիտէին պատմա-
կան դէպքեր, գիւղական տեսարան-
ներ և ծաղիկներ նկարել:

Հոն Պրովեր, շատ լաւ ընդունելու-
թիւն գտաւ, որով ոյժ ու խրախոյս ե-
կաւ վրան: Այսպէսով քանի մը պըզ-
տի նկարներ շինեց որով շատ զարմա-
ցաւ վան-Սօօմեր, և իրեն առատա-
ձեռնութեամբը կը խրախուսէր Պրո-
վերը: Հոննկարեց գեղացիներուն և զօր-
քերուն թուղթ խաղալու ատեն եղած
վիճարանութիւն մը, որ զարմանալի
պատկեր մը եղաւ, թէ իրբունկարչու-
թեան արուեստ և թէ ըստ որում գոյ-
նի գարծածութեան, իւրաքանչիքին
կիրքը աղէկ դուրս կը ցատկէր. ասով
մանցուեցաւ որ այս պատկերահանին

են եղեր այն նկարները զորոնք չալ ծան-
րագնի կը ծախսէր: Մէկը որ շատ ատե-
նէ 'ի վեր կը փնտուէր այս պատկերնե-
րուս հեղինակը, իմանալով շուտ մը գնեց
այս նկարը և մէկէն գինը տուաւ հա-
րիւր տուգամ: Պրովեր, ապած առա-
ջին անգամ ճանչցաւ իր հանճարոյն ա-
ժէքը և ինչ օգուտ որ անկից կրնար
քաղել: Մէկը որ այս նշանաւոր պատ-
կերահանը դժբաղդութեամբ ցած բա-
րոյական մը ունէր և շուայտասէր մարդ
մ'էր, որ խեղճութեամբ հիւանդանոցի
մը մէջ մեռաւ 1640ին:

ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

Ա. Փ Ր Ի Կ Է

Արաբիոյ անապատը բնակող թա-
փառական ցեղերն Պէտէիք կը կո-
չուին, որոնք կը գտնուին նաև եգիպ-
տոս, Ասորիք և Ափրիկիոյ ու Ասիոյ ու-
րիշ այլ և այլ կողմերը, բանելով Պարա-
կաստանէն մինչև Մարդ ձգուած մեծ
անապատը: Արաբացոց ամենէն մա-
քուր և ընտիր ճիւղը կը կազմեն Պէ-
տէւիները. վրանաքնակ են, և աւելի
անամնադարմանութեան կը պարապին,
բայց կուուէ ու աւազակութենէ ալ ետ
չեն կենար: Բաղդատելով Դիոդոր սի-
կիլիացւոյն այս ժողովրդեանս համար
պատմածը արդի ճանապարհորդաց ը-
սածին հետ, կը տեսնենք որ անփոփոխ
նոյն այն իրենց սկզբնական անկախու-
թիւնն ու պարզութիւնը մինչև հիմա
պահեր են: Ամեննեին մէկ զլխով և ա-
ռաջնորդով չկրցան կենալ, այլ զանա-
զան ցեղեր ու գունդեր բաժնուած, իւ-
րաքանչիւրն ունենալով իրեն ազատ
իշխանը, որ Շէլս կամ էմիր կը կոչուի,
և որ որչափ շատ ազգական ու բարե-
կամ ունենայ, այնչափ զօրաւոր կը սե-



Պէտէի Արարացի.

պուի : Ամեն մէկ ցեղն ունի իր սեպհաւ, կան երկիրն որ իրեն պզտի տէրութիւնը կը ձևացընէ . Հո՞ն կը բնակի մէկ կամ շատ վրաններով որոնք այծի կամ ըլլառու մաղէ հիւսուած են : Եթէ ցեղմուռիւ ցեղի մը տունը ոտք կոխէ , թշնամի կը համարուի և մէկէն պատերազմի դուռ կը բանայ որ մէկուն կամ մէկա-

լին ուրիշ գրացի դաշնակցի մը քով փախչելովը կը դադրի :

Թէպէտև այսպէս այլ և այլ ցեղեր բաժնուած՝ յաճախ մէկմէկու հետ կը ռուելու հետ են , այլ 'ի վերայ այսր ամենայնի Պէտէկիք ամենը մէկտեղ ուրոշ ազգ մը կը կազմեն : Լեզունին գրեթէ ամեն տեղ նոյն է : Ընդհանրապէս



Վաձառական Մատրիտանացի .

անգութ ու պատերազմող են և միշտ
ձիով ու հրացանով կը պատերազմին ,
ու բռնած գերիներն ալ կը սպաննեն :
Սովորական հագուստներն երկայն ճեր-
մակ վերարկու մ'է :

Ճամփուզորս տարիէ ՚ի վեր Գաղղիա
տիրած ըլլարով ձէզայիրի , և մինչև
ցայսօր Ափրիկէի Պէտէւաց դէմ կը-
ռուելու հետ ըլլարով , այս երկրին և

ժողովրդեան վրայօք շատ մը գրուած .
ներ հրատարակուեցան , որոնք ընթեր-
ցասէրը կարդալով կրնայ ուզածին
պէս տեղեկութիւններ առնուլ : Այս
անգամուս բաւականանալով համառո-
տիւս , կը խոստանանք գալ ամսաթեր-
թով ընդարձակագոյն խօսելու այսնիւ-
թիս վրայ :

—Մատրիտանացիք Պէրպէրներուն և



Օրիորդ Սոքնացի.

Արաբացւոց խառնուրդէն առաջ եկեր
են՝ կըսեն : Մաւրիտանացի կ'անուանեն
ոմանք նաև այն Սարակինոսները կամ
Արաբացիներն որոնք Արաբիայէն ել-
նելով՝ Ափրիկիոյ հիւսիսակողմը գնա-
ցին . բայց անկէց ալ Սպանիա անցնե-
լով՝ հոն վերջապէս բնակեցին : Իրենց
հետ Սպանիոյ մէջ բերին մտուցին գի-
տուժինք , դպրութիւն և արևելեան

արուեստք : Կամաց կամաց քշուելով
այս երկրէն Գասղիլիյ և Արակոնի թա-
գաւորներէն , հանեցին ձեռուլներնէն
իրենց վերջին ապաստանը կրընատրեր
դը զոր Փերտինանատոս 1492ին առաւ :
Մատ ուժ հարիւր տարւոյ չափ տիրե-
ցին Սպանիոյ . ետքէն կէս մը Ափրիկէ
անցան , և կէս մ'ալ Սպանիա մնալով՝
դարձան քրիստոնեայ եղան : 1574ին

Փիլիպպոս թ. իրենցմէ 100,000ի չափ գուրս վռնտեց, և Փիլիպպոս դ. ալ 1610ին բոլոր մնացածը. և այս հալածակն Սպահնից կործանմանը պատճառ եղաւ:

Մայրաքաղաքն է Մարզը (Մէրաքէ) որ 1052ին գեղեցիկ դաշտի մը մէջ շինուեցաւ. անուանի է Մարտրին կաշին. բնակիչն է 70,000: Մաւրիտանացոց վրայ ալ նմանապէս ուրիշ անդամ մ'աւելի երկարագոյն պիտի խօսինք:

— Սոկնայ քաղաքը Ֆէզզան երկրին հիւսայիլն կողմէ ընդարձակ դաշտի մը մէջ կ'ինայ, անուանի է իրեն արմաւենեքը, որոնց նմանը հիւսային Ավրիկից մէջ չգտնուիր:

Ուն կամ Հոռորանոս գետոյն խորասոյզ ըլլալը.

Հոռորանոս ձինեւոյի մօտերը մի. ջին չափով 220 ոսք լայն է. բայց երրոշէնի կամուրջէն կէս փարսախ վար. խիստ շատ կը նեղնայ, և հազիւ 15—16 ոսք կը ֆնայ. վատն զի կրաքար ապառաժ մը իրեն դիմացը գալով՝ գրեթէ անցքը կը խափանի. զարմանալին այն է որ փոխանակ չորս կողմի երկիրները ողողելու, այն ժայռերը մաշեցրնելով իրեն ճամբայ բացեր է և բարորովին առոնց մէջ ծածկուելով անհետ կ'ըլլայ. ձմերուան ու գարնանային եղանակներուն աւելի զուարծալի կ'ըլլայ աս տեսարանս:

Հոռորանոս դեռ խորասոյզ ըլլալու տեղը հասած կաւային երկիրներու մէջէն կ'անցնի, ուր սաստիկ խորութիւն և լայնութիւն ունենալով, ու նաև քիչ դարուվար՝ խաղաղ ընթացք մը, ջրին երեսը զգալի շարժմունք մը չերսար. բայց երբոր ժայռոտ տեղուանքը կը հասնի՝ յանկարծ ժայռէն ընդհատելով՝ ձագարի նման կիրճ մը կը ձեւանայ, որուն մէջ անըմբանելի երագու-

թեամբ մը կը խորասուզի ամբողջ գետն ահաւոր ու որոտալից ձայնով, ուր ջրերը կը բարձրանան և զիրար ծեծելով կը փրփրան. հոս է գետոյն կորսուելուն սկիզբը: Ժայռերը ան աստիճանն մէկմէկու կը մօտենան՝ որ գետոյն մէկ եղերքէն ինչուան միւսը հազիւ երկու ուրքի չափ միջոց կը մնայ. անանկ որ եթէ դիրքը վտանգաւոր չըլլար, միջահասակ մարդ մը կրնար մէկ ոսքը մէկ եղերքին վրայ գնել որ Գաղղիոյ կը վերաբերի, և միւս ոսքը մէկալ եղերքին վրայ, որ Սաւոյայի¹ սահմանն է, և ներքեւ դիտել այն ամփոփուած գետը որ կարծես թէ բարկութենէն կը դողայ աս նեղ կիրճէն անցնելու ստիպուած ըլլալուն համար: Ան լիրան տակէն դուրս ելլալէն վերջը, քիչ մը վար 30 ոսքի չափ կ'ընդարձակի, նոյնպէս իրեն անցքը ժայռերու մէջէն փորած ըլլալով, աւելի հանդարտ կ'ընթանայ. բայց քիչ մը վերջը նորէն կը նեղնայ, դիմացը կարծր ապառաժ մը հանդիպելով, զոր նոյնպէս մաշեցրնելով իրեն ճամբայ մը բացեր է. և ժայռերը երկու կողմէն 8—10 ոսքի չափ ոէպ 'ի ջրին վրայ դուրս երկնցած են, և մէկ եղերքէն ինչուան մէկալը բաւական լայն է ջրանցքը: Իսկ բուն Հոռորանոսի կորսուելու տեղը վերի ըսած ձագարակերպ կիրճէն երկու երեք հարիւր քայլ հեռու կ'ինայ. ուր գետոյն վերի կողմէրէն փրթած ժայռի կտորուանքը կուգան կը դիզուին յատակին վրայ, ու կը բարձրանան ինչուան ջրին երեսը վախտուն քայլի չափ տեղ: Աս քարերու ոէպիին վրայէն կրնայ մարդ քալելով մէկ կողմէն միւտը անցնիլ, բայց քարակոյտին վրայ ելլալը գիւրին չէ. վասն զի պէտք է առաջ վերի ըսած դուրս ցըցուած քարայատակին վրայ ելլել, որուն եղերքն ալ ուղղաձիգ կտրուած ըլլալուն համար՝ սանդիխով միայն վրան կ'ելլացուի. և ահա ասոր մօտերէն կը սկսի գետն խորասոյզ ըլլալ: Հոն ելլա-

¹ Ասկէ քիչ առաջ Սաւոյան Սարդէնիոյ կը վերաբերէր, հիմայ ան ալ Գաղղիոյ մասն է: